ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՊԵՐԼԻՏ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող Արագածոտնի մարզի Արագածի պեռլիտի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկումների վերաբերյալ /2-րդ քննարկում/

2025 թվականի ապրիլի 15-ին՝ ժամը 12:00-ին, Թալին համայնքի Արագածավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «ՊԵՐԼԻՏ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող Արագածոտնի մարզի Արագածի պեռլիտի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 2-րդ հանրային լսումը:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունը հասանելի է եղել հանրության համար, ինչպես նաև տեղադրված է եղել Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում, իսկ շահագրգիռ հանրությունը հնարավորություն է ունեցել մինչ հանրային լսումն իր առաջարկությունները, դիտողություններն ու կարծիքները գրավոր ուղարկել նաև Թալինի համայնքապետարան, ինչպես նաև նախօրոք գրանցվել հանրային քննակումներին մասնակցելու համար:

Հանրային քննարկմանը ներկա էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Արմինե Վարդանյանը, Թալին համայնքի քաղաքաշինության և հողաշինարարության բաժնի պետ Գագիկ Միրզախանյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Մանուկ Խոեցյանը, Արագածավան բնակավայրի վարչական շրջանի ղեկավարը «Պերլիտ Սթոուն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Անդրանիկ Հովհաննիսյանը, ՇՄԱԳ իրականացնող կազմակերպության անկախ փորձագետ Սահարուն Գևորգյանը, վարչական շրջանի բնակիչներ, շահագրգիռ հանրությունը:

Հանրային լսման պատասխանատու՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Արմինե Վարդանյանը հանդես եկավ բացման խոսքով, ողջունեց հանդիպման մասնակիցներին, ներկայացրեց հանդիպման հիմնական նպատակը և փորձաքննական գործընթացի շրջանակներում կատարված աշխատանքները:

Նա նշեց, որ ՀՀ օրենսդրության համաձայն նախատեսվող գործունեությունը դասակարգվում է Ա կատեգորիայի, Օրենքով փորձաքննության իրականացման համար նախատեսված է 80 աշխատանքային օր: ՇՄԱԳ հաշվետվությունն օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններ՝ կարծիքներ ստանալու համար: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են աղաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա այն ներկայացվել է նախաձեռնողին՝ լրամշակման: Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, ՀՀ օրեսնդրությամբ սահմանված կարգով նշանակվել են հանրային լսումներ: Նա ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, թե ՇՄԱԳ հաշվետվությամբ ինչ է նախատեսվում իրականացնել, նշեց, որ 1-ին հանրային լսման արդյունքում համայնքի ավագանին տվել է իր նախնական համաձայնությունը և այսօր արդեն անցկացվում է 2-րդ հանրային լսումը:

Մասնագետը նշեց, որ տեղեկատվության արդյունահանման տարածքը սահմանակից է ջրային նպատակային նշանակության հողերին, ավելի հստակ տեղեկատվություն ստանալու նպատակով փորձաքննական կենտրոնը հարցում է

կատարել համապատասխան լիազոր մարմնին պարզելու՝ տարածքին հարակից ջրային հողերի, հնարավոր հիդրոտեխնիկական կառույցների (ջրանցք, հեղեղատար, սելավատար և այլն) առկայության վերաբերյալ: Նշված տեղեկատվության վերաբերյալ համայնքի և բնակավայրի մասնագետների հետ ծավալվեց քննարկում, նախաձեռնողը տեղեկացրեց, որ տեղյակ չի եղել հարակից ջրային նպատակային նշանակության հողերի առկայության վերաբերյալ:

Այնուհետև նախագծի մանրամասները և բնապահպանական հարցերը ներկայացնելու նպատակով Արմինե Վարդանյանը խոսքը փոխանցեց ՇՄԱԳ իրականացնող կազմակերպության անկախ փորձագետ Սահարուն Գևորգյանին: Գևորգյանը հակիրճ ներկայացրեց նախագծով նախատեսված գործունեությունը՝ արդյունահանման տեխնիկատնտեսական ցուցանիշները: Ներկայացրեց, որ հանքավայրի արդյունահանման աշխատանքների հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում կապված են լինելու լեռնակապիտալ աշխատանքների, արդյունահանման, բեռնման-բեռնաթափման հետ: Շահագործման ընթացքում նախագծով նախատեսվում է օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից, բուսական և կենդանական աշխարհի պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի իրականացում:

Նշված հարցերի շուրջ ՊՈԱԿ-ի մասնագետի, համայնքի ներկայացուցիչների հետ ծավալվեց քննարկում, ինչն ամբողջությամբ տեսաձայնագրվել է ՊՈԱԿ-ի աշխատակցի կողմից:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Արմինե Վարդանյան

Նախաձեռնող՝

«Պերլիտ Սթոուն» ՍՊԸ ներկայացուցիչ՝ Անդրանիկ Հովհաննիսյան